ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 251

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքը (Տաշիր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Տաշիր համայնքի (Տաշիր բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքը (Տաշիր բնակավայրի) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի (Տաշիր բնակավայր) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
06-008-0464-0001 կադաստրային ծածկագրով 206.73 հա մակերեսով հատուկ նշանակության հողեր	06-008-0464-0001 կադաստրային ծածկագրով 206.73 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Տաշիր համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Տաշիր բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի (Տաշիր բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, « 8 » «օգոստոսի» 2025 թ.